



Տարեկան գինն է . . . 120 ռ. 2
Վերջինսայն . . . 65 " "
Եւամեկայն . . . 35 " "
Մէկ ծանուցումը տողին 40 վարա է :
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամիս 1 ին
եւ 16ին կը սկսին :

Դուրս երթալիք լրագրներուն ծածկուն
ծախքը ամեն մէկ թիւին համար 20
փարա է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ
եւ իցէ գրութիւն, խմբագրին պիտի
ուղղուի . եւ ասոնց ծածկուն ծախ-
քը խրկուին վրայ է :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 28 ՅԱՆՎԱՐ

ԳԵՐԵՍԵՆ ԵՎԱՅԻ ԼՈՒԻՍԵՐ

Սեւ ծովէն եկող շողեւանները այս
շարժում ալ կարեւոր լուր մը չբերին
Գլխաւորէն, բայց մեծամեծ գործողու-
թեանց ժամանակը խիստ մօտ կը կարծուի :

Գաշնակից զօրքերը թշնամեաց ամ-
բողիկեաներուն այնչափ մօտ հասեր են,
որ երկու կողմանէ մէկմէկու խօսածը կը
լսեն, եւ զինքի սրուակներ (շեշէ)՝ դատարկ
կամ մէջը վառող լեցուցած ու պատրոյ-
ղով (ֆիթիլ) բռնկուցած՝ ձեռքով մէկ-
մէկու մարտիկները կը նետեն եղբւր :

Գաշնակիցները բազմաթիւ նոր
մարտիկներ շինել են, բայց ծածուկ
պահված են, եւ միայն զինուորական ճար-
տարակներուն ծանօթ են :

Ուսուցիչ շարունակ եւ անդադար
կրակ կ'ընեն գաշնակիցներուն աշխատա-
ւորացը վրայ, որ անոնց շինութիւննե-
րուն արդէն ըլլան. բայց մինչեւ հիմա
շտնքերին պարագայ չ'ընէ, եւ գաշնակից-
ներն՝ յառաջանալու վրայ են :

Օրաց առողջութիւնը լաւ վիճա-
կի մէջ է : Քօլէրան զրեթէ բոլոր-
ովին դադրել է, բայց անոր խեղճ
Ստրեյք-ը ըսված հիւանդութիւնը զաղ-
ղեացող մէջ ինկել է, անգղիացեաց մէջ
փորհարութիւնը կը տիրէ, սարտեհիա-
ցեաց մէջ ալ տէնդ (սրժմա) : Բայց աս
հիւանդութիւններուն վնասը քրիստոսի
պէս չէ. հարկը հիւանդացողէն հազիւ
մէկը կը մեռնի եղբւր :

Նոսրիկները մեծ հիւանդանոց մը
կը շինեն Պալաթական կողմէն Եւ Նոսր-
իկի մօտ, որ ծովահայաց եւ օդը ա-
ռողջ տեղ մը ըլլալով, հիւանդները շու-
տով բժշկելու մեծապէս պիտի նպաստէ :

ԴԱԼԹԻԿԵՆ ԵՎԱՅԻ ԼՈՒԻՍԵՐ

Ս' Էրօքն լուրերը կը ծանուցանեն,
թէ գաշնակից տերութեանց նաւատոր-
միկներուն մեծ մասը Ռէվելէ գիմացը
Նարիէն բախճ կղզին քով երկաթ նե-
տած են : Բայց անգղիացեաց թիւղանո-
թակիր մակոյկները՝ ուստաց բոլոր ծո-
վեղերները կը պտրտին, եւ տեսած նա-
ւերին կ'այրեն : Եւսանկով մինչեւ հիմա
90 էն աւելի նաւ այրել են : Նոսրիկա-
կան Եւսանկով եւ Մաքիէն շողեւանները
ուստաց Ս' Էրօքնի նաւահանգիստը քրի-
ստները երթալով, ծովեղերը կ'առնէ մարտ-
կոյններուն հետ ժամու մը չափ պատե-
րալմը, ուստաց թիւղանոթներէն մէկ
քանին լուսնուցը են : Եւս փորձելի կը-
ռնին մէջ անգղիացիներէն 1 հոգի մե-
ռել 9 հոգի վերադարձել են :

Ուսուցիչ կառավարութիւնը շան-
կոի գործը արդարացիներու նոր փորձ
մինչեւ ըրաւ : Ար Գրեյ, թէ անգղիա-
կան Քոստա շողեւանին նաւատորմէրը
Ջաքարիէն զատաւարանաւորութիւնը
նոյն իսկ անգղիացեաց վրայ կ'ընէ, որ
գետնաւորական դրօշակը ցամաքը ելլելուն
եղբւր պարզեր են կ'ընէ : Եւս առիթով
Ուսուցիչ պատերազմի պաշտօնեայ Ս' Է-
րօքն Տօլօրուքի իշխանը Պալմիկի գաշ-
նակից ծովապետներուն վերջին նամակ մը
գրած է, որուն մէջ՝ Քօնստանտին, Սը-
վապօրիկ եւ Ռէվելէի նաւահանգիստներէն
զատ, Լիւպա, Ս' Էրօքն, Ս' Էրօքն եւ
Թարնէս նաւահանգիստներն ալ գաշնա-
կից նաւատորմիկներուն ու Ուսուցիչ իշ-
խանութիւններուն մէկմէկու հետ գետ-
նաւորական դրօշակաւ հաղորդակցութեան
տեղի նշանակված են :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՍԵՐ

Պայտերական հրամանաւ՝
Սպարապետի Դրան ժողովին նա-
խագահ Սօհրաբէր փաշան Ս' Էրօքնի
կուսակալ անուանեցաւ միւշեւրութեան
ատիճանաւ :

Պայտերական անձնապահ զօրաց ժո-
ղովին նախագահ Քիֆաթ փաշան Սպա-
րապետի Դրան ժողովին նախագահ ա-
նուանեցաւ :

Արքունի փողերանոցին անօրէն մե-
ծադատիւ Միհրան չէլէպին Տիւղեան,
վիհափառ ինքնակալին ոսկերչապետ մե-
ծադատիւ Պօղոս չէլէպին Տիւղեան եւ
Ֆէօստանի անօրէն մեծադատիւ Տիւղեան
աղայն Ալեքսանեան, պէյ կոչվելու ար-
տօնով թիւն ստացան :

Եւս պատճառաւ՝ նոյնի մեծապետ-
ութիւնը ուրբաթ օրը Չրազանի կայ-
սերական պալատը երթալով՝ օգոստոս-
փառ ինքնակալին ոտքը պահելու պա-
տիւ ունեցան :

Եւս պալատին լրագրիկներուն մէջ հե-
տեւեալ երկու նամակները կը կարգանք,
որոնք մեր օգոստոսական ինքնակալը խօսված
է Գլխաւորի դադրեցական ու անգղիական զո-
րաց հրամանատարներուն :

Եւ Քիֆաթի զօրաց քննադատը Գլխաւորի
մանապաք քաղաքացի քանալի Գլխաւորի :

Պայտերական

Յանկալէ է ինձի իմ բարձր հաճութիւն
յայտնել ձեզ եւ ձեր հրամանին տակը գրված
արիւնքով բանակին, որնոր կայսրը՝ իմ օգոս-
տոսիս եւ մտերմ գաշնակիցս՝ իմ իրաւանց
պաշտպանութեանը համար խրկած է : Միայն
գաւմայն կը փափաքեմ իմ անկեղծ ուրախակցու-
թիւնս ձեզի ընծայել հրապարակաւ՝ այն նոր
զինուորական արդիւնքներու համար՝ որ այս օ-
րերս աւելցուցիք այնչափ լաւագործութիւն
քաջագործութիւններու վրայ, որոնք փառքով
ծածկեցին գաշնակից զօրքերը՝ որ արդար իրա-
ւորքի մը համար կը պատերազմէին, եւ անեղի-

շողութեամբ կ'արհամարհէին իստակները մը գառ-
նութիւնները :

Պատերազմի դաշտերուն վրայ թափված
արիւնքը այնպիսի դատի մը պաշտպանութեան
համար՝ որ այս օրուն օրս Եւրոպայի մէջ իրա-
ւանց հաստատ մնալուն դրաւական մը եղած է,
ստուգիւ ապագային համար պատուական արդիւնք
մը պիտի ունենայ՝ իրաւարարը հասկընալու ար-
ժանիագրերը միաբանելու, եւ կառավարութեանց
իմաստութեամբ կազմելու գաշնակցութիւն-
ները անընդունակ կապելով ամրացնելու. ու-
րովհետեւ ազգաց ամենազօրեալ համակրութիւ-
նը՝ ամենին բնական եւ ամենին օրինաւոր գաշ-
նակցութիւնն է :

Տարակցութիւններ, որ Գլխաւոր արիւ-
նքով զօրաց պատերազմական եւ բարդական
քաջութեանը վրայ զգացած զարմացումս՝ այս
օրուն օրս Եւրոպայի ինձի յանձնած ամեն ժո-
ղովեղանքուն ալ կը հաղորդէ, եւ այսուհետեւ
չենք կրնար խորութիւն դնել հասարակաց իրա-
ւանքին համար պատերազմող զինուորաց եւ ոչ
մէկուն մէջ :

Բարձր աշխարհի աշխարհ միաբանեալ մեծ
ազգաց զաւկներուն վրայ է, որոնք իրենց երկ-
րին փառացը համար կը պատերազմէին : Տարա-
կայն չունիմ, որ այն զինուորները՝ որ արի-
ւորակ. զօրապետին հրամանին տակը իրենց փորձն
ընին, եւ հիմա պայծառ արութեամբ ձեր հրա-
մանին տակը կը շարունակեն, թէ ժամանակին
իրենց զինակից եղբայրներուն հետ՝ վճռողական
յաղթութիւն մը բնակով, ամեն վտանգներու եւ
նեղութիւններու յաղթող իրենց անմահ քա-
ջութեամբ արժանի դադրեցները պիտի ստանան :
Պարծառք կը սեպեմ ինձի տեսնել, որ իմ զօր-
քերս ալ այս անարատ եւ սուր փառաց ընկեր
եղած են :

Համան բրած եմ իմ բանակի օգնականին
Ֆէրիք Իշէհմէ փաշային, որ այս նամակի ձեռքի
բերել եւ իմ գոհութիւնս յայտնել ձեր բանակին
զօրացը : Եւս համար արտիս զգացած զարմա-
կան սերը խիստ մեծ է, որովհետեւ իրենց քա-
ջագործութեամբ ամենուն ուշադրութիւնը գը-
րառող այս արի զինուորները՝ իմ տերութեանս
ամենին հին գաշնակից եղող ազգին զաւկներն
են :

Ս' Էրօքն Ս' Էրօքն, որ ամենափառաւոր
յաղթութիւններ պարգեւէ ձեզի, եւ իր սուրբ
եւ արժանի խնամքը պահպանէ :

Ի պալատն Չրազանի, 12 չէվալ 1271

Եւս Եւս Ս' Էրօքն քննադատը Գլխաւորի
անհրաժեշտ քանալի Գլխաւորի :

Միւրոյն

Թաղաւհին իմ օգոստոսական եւ մտերմ
գաշնակիցս՝ ձեզ իրենց պաշտպանելու իմ իրա-
ւանքս, որ արդար եւ օրինաւոր ըլլալով՝ բոլոր
քաղաքակրթեալ աշխարհին իրաւունքն եղած
է :

Գլխաւոր եւ ձեր հրամանին տակը եղող քաջ
զօրքերը՝ ձեր եւ իմ երկիրներուն տակը կ'առնէ-
թեանը պատասխանեցիք : Գլխաւոր կ'ընայի մը
տակ ըրած փառաւոր քաջագործութիւններով-
նիդ ամենուն զարմացող արժանի եղող :

Եւս նոր յաղթութիւնները՝ որ այս օրերս
աւելցուցիք այնչափ պանծալի գործող վրայ որ
Գլխաւոր մէջ եղան իմ զօրքերուն հետ միաբանու-
թեամբ՝ որոնք զաւկներուն պէս կը սիրեմ, յոյս
կուտան ինձի վճռողական սկզբնաւորութեան պէս
մը, որ պատերազմին սկզբնաւորութեան պէս
փառաւոր պիտի ըլլայ այս մեծ գաշնակից ազգաց
համար :

Օգոստոս անարատ բերելով թիւն կ'աւել-
նայ մտածելով՝ որ պատերազմի պէս զարհուրելի

բան մը պատճառ. պիտի ըլլայ իմ ժողովուրդ-
ներս Եւրեմալքի ամենին մեծ ազգաց հետ ան-
ընդունակ կապելով միաբանելու :

Քանի որ փառաց արիւնք շարժառիթը
մարդկային սիրտը բաղնեցընէ, անոնք՝ որ եղ-
բայրական նախանձով պատերազմեցան, անոնք՝
որ օտար հողի վրայ իրենց արիւնք խառնեցին,
չպիտի մոռնան իրենց ընկերները որ իրենց իբրեւ
եղբայր կը ծանչնան : Եւս բանն որ մինչեւ հիմա
մարդկային ազգին համար պատու հաս մըն էր,
գոհացուցիչ արդիւնք մը պիտի ստեղծ ըլլայ՝ մէկ-
մէկու ծածկեցնելով այն ժողովուրդները՝ որոնց
կառավարութիւնները արդէն մէկմէկու գաշնակից
էին : Եւս պատերազմը՝ տեսական եւ օգտակար
պատերազմով հարուստ խաղաղութեան մը բողոք-
նալով պիտի բերէ այնպիսի ազգաց մէջ՝ որ իրար ծանչ-
նալու եւ յարգելու արժանի էին :

Փափաքեալ իմ խորին հաճութեանս ա-
պացոյց մը եւ գոհութեանս յայտնի վկայութիւն
մը տալ Գլխաւոր քաջ պատերազմողներուն, իմ
բանակի օգնականս Ֆէրիք Իշէհմէ փաշան
իրենց որ այս նամակի ձեռքի տայ :

Ս' Էրօքն է ինձի հաւատալ, միւրոյն, որ ձեր
հրամանին տակը եղած բոլոր քաջ սպաններու ու
զինուորները պիտի համոզվին, որ մեր բնա-
խորութիւն չենք բնոր հասարակաց իրաւունքին
համար պատերազմող զինուորաց եւ ոչ մէկուն
մէջ, եւ իմ անոնց վրայ ունեցած գործակցող սեր-
արձագանք կը գտնէ Տաճկաստանի բոլոր ժո-
ղովեղաց որոնք մէջ, որոնք՝ ձեր զօրքերը իմ տե-
րութեանս ամենին հին գաշնակիցները կը ծանչ-
նան :

Ս' Էրօքն Ս' Էրօքն, որ ձեր ամենափառ-
աւոր յաղթութիւններ պարգեւէ, եւ իր ամե-
նասուրբ անհրաժեշտ պահպանէ :

Ի պալատն Չրազանի, 13 չէվալ 1271

Բ. ԴՐԱՆ ԵՒ ՅԱՆԱՅՏԱՆԻ ՄԻՋԵՂԱՎՈՐ ԱՌԵՆՏԵՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

(Հարաւստիւնիւն եւ վերջ)

ՅՕԴ. ԺԷ : Հիւանդանոցի հպատակները
ինչպէս նաեւ Բ. Դրան բարեկամ եղող միւս
տերութեանց հպատակները՝ չեն կրնար Օսման-
եան տերութեան մէջ հաստատված կանոնաւոր
արուեստակցութեանց (էմալ) անդամ ըլլալ,
եւ ոչ այն արուեստակցութեանց յատուկ եղած
արհեստները բանիլ : Բայց թէ որ անանկ հեղ-
կեական հպատակներ դառնալին, որ հիւանդ 'ի
վեր յիշեալ արուեստակցութեանց անդամ եղած
ըլլան, կրնան հիւանդանոցի հպատակութիւնը չը-
թողուլ, բայց կը պարտաւորին նոյն արուեստակ-
ցութեանց անդամ եղող Բ. Դրան հպատակ-
ներուն վրայ եղած պայմաններուն տակը մտնե-
լու, անոնց վճարած տուրքը վճարելու, եւ աս-
նոնց յատուկ եղած պարտաւորութիւնները կա-
տարելու. եւ այն արուեստակցութեանց մէջ ի-
րենց արհեստը բանելու համար իրենց վրայ գը-
ված պարտաւորութիւններուն հախաւակ վար-
ված ժամանակներն պիտի դադարեցնեն պատժելի
առանց իրենց գետնային կամ հիւանդանոցին մէջ
նորութեանը : Ս' Էրօքն պարտաւորեալ պի-
տի ըլլան իրենց դադարեցած արուեստակցութեան
ամեն կանոններուն եւ նոյն արուեստակցութեան
նկատմամբ տեսութեան հաստատած կարգադ-
րութիւններուն հնազանդելու : Որովհետեւ է, որ
յիշեալ հիւանդանոցի հպատակներէն մէկը չընտր
նոյն արուեստակցութեանց մէջ մէկուն գլուխ ըլլալ :

ՅՕԴ. ԺԸ : Իժէն պատահի, որ գաշնա-
կիւր տերութեանց մէկը պատերազմ ունենայ,
միւսին հպատակները կարող պիտի ըլլան իրենց

նաւարկութիւնն ու առուուորը շարունակելու թշնամեաց երկիրներուն հետ, բայց այն քաղաքներէն կամ նաւահանգիստներէն որ պաշարված ըլլան ցամաքէն կամ ծովէն: Բայց բնաւ երբեք ներքալ չէ իրենց՝ պատերազմի համար արդիւլիւն ապրանքներու եւ պատերազմի գործածութեան համար շինված գործիքներու առուուոր ընել:

ՅՕԿ. ԺԹ: Համաձայնութեամբ որոշված է, որ թշնամի նաւ մը չպիտի կրնայ երկու դաշնադիր տէրութեանց մէկէն կամ միւսին նաւահանգիստներուն մէջ կամ ծովեզերքը պատրաստելի ու զինուորի:

ՅՕԿ. Ի: Երկու դաշնադիր տէրութիւնները փոխադարձաբար իրաւունք պիտի ունենան մէկ մէկու արքունեաց քով գեւապաններ եւ ուրիշ գեւապանական գործակալներ դնելու: Նաեւ հիւպատոսներ (քօնսուրդ) եւ հիւպատոսի գործակալներ դնելու մէկ մէկու նաւահանգիստներուն ու քաղաքներուն մէջ՝ ուր որ հարկաւոր դատուի իւրաքանչիւր կառավարութիւններէն:

Հիւպատոսները իրենց տէրութիւններէն ըստ կանոնի ընտրվելէն ետքը՝ չեն կրնար պաշտօն վարել՝ մինչեւ որ իրենց դրված երկրին տիրող պետը հաճութիւն չտայ: Ասոր համար պետք եղած հրամանագիրը պիտի արվի իրենց:

Արտիքի Ե, որ հիւպատոսները եւ հիւպատոսի գործակալները իրենց դրվելու երկրին տէրութեան հպատակներէն չպիտի ըլլան:

ՅՕԿ. ԻԱ: Ա երկրիչալ հիւպատոսները եւ առեւտրական գործակալները իշխանութիւնն ունին տեղական իշխանութեանց օգնութիւնը ուղիւն իրենց երկրին պատերազմական կամ առեւտրական նաւերէն փախչողները փնտրելու բռնելու եւ բանտարկելու համար: Ասոր համար պէտք է տեղւոյն օրինաւոր իշխանութեանցը դիմեն, եւ վերադիւրս փախտեալները անոնցմէ զրոյժ խնդրեն, որոնք նոյնութիւնը կրնայ հաստատվել, կանխած մը պատահած ատեն, նաեւ տուժանքներ կամ նաւատեսաց ցուցակները երեւան հանելով, որպէս զի անոնց մէջէն ստուգվի թէ փնտրված անձինքը յիշեալ նաւին մարդիկն են. եւ այսպէս ստուգվելէն ու հաստատվելէն ետեւ՝ ուղիւն մարդիկը պիտի արվին:

Ասանկ փախտեալները երբոր բռնվին՝ վերադիւրս հիւպատոսներուն ու առեւտրական գործակալներուն պիտի յանձնվին, եւ զանոնք փրկաւորներուն ուղիւն ու ծախքով կրնան տեղական իշխանութեան բանտը դրվիլ, մինչեւ որ իրենց նաւը դարձնվին կամ իրենց հայրենիքը խրկվին՝ նոյն ազգին վերաբերեալ կամ ուրիշ որ եւ է նաւով մը: Բայց թէ որ փախչողը բռնել տուող հիւպատոսին կամ գործակալին կողմէն յառաջ եկած պատճառով մը՝ բանտարկեալը մինչեւ չորս տարի տեղը չխրկվի, բանտէն պիտի արձակվի, եւ ալ այնուհետեւ նոյն յանցանքին համար չպիտի բռնվի:

Սակայն, թէ որ փախտեալն եղեւնազոր-ծովիւն կամ յանցանք մը ըրեր է նէ, անոր ետ արվիլը կրնայ ուշանալ՝ մինչեւ որ անոր դատաստանը տեւտող ատենանը իր վիճալը տայ եւ այն վիճիւր գործի դրվի:

ՅՕԿ. ԻԲ: Երկու դաշնադիր տէրութեանց մէկէն կամ միւսին գեւապաններ եւ ուրիշ գեւապանական գործակալները, ինչպէս նաեւ հիւպատոսները եւ հիւպատոսական գործակալները չեն կրնար բնաւ մէկ ժամանակ մը՝ իրենց ազգին դրօշակը կամ ազգայնութեան վրայ յարկեր եւ կամ իրենց պաշտպանութիւնը տալ իրենց տէրութեան հպատակ չեղող նաւու մը:

Այն նաւերը՝ որ երկու տէրութեանց ամեն մէկուն մէջ հաստատեալ կանոններուն համաձայն ուղղված են եւ կրնան արկիտ, Օսմանեան կամ հելլենական նաւու պէս պիտի համարվին:

ՅՕԿ. ԻԳ: Երկու տէրութեանց գեւապանները, գեւապանական գործակալները, հիւպատոսները եւ հիւպատոսական գործակալները չեն կրնար բնաւ ոչ յայտնադէս եւ ոչ դադարի մէկ մէկու հպատակները իրենց օրինաւոր իշխանութեան ձեռքէն դուրսալ՝ կամ զանոնք պաշտպանել անցագիրներ կամ ազգայնութեան թուղթեր տալով անոնց:

ՅՕԿ. ԻԴ: Երկու դաշնադիր տէրութեանց գեւապանները, գեւապանական գործակալները, հիւպատոսները եւ հիւպատոսական գործակալները մէկմէկու երկիրներուն մէջ նոյն պատիւները, յարգանքները, արտօնութիւնները եւ պաշտպանութիւնը պիտի վայելեն, որն որ կը վայելն ամենէն աւելի արտօնութիւն վայելող տէրութեանց գեւապանները եւայն:

Հաստատ իրաւունք պիտի գործածեն իրենց ազգայնացը վրայ հսկելու, եւ իրենց ազգայնիքը՝ մէկմէկու հետ քաղաքական կամ առեւտրական վեճեր կամ դատեր ունեցած ժամանակներն ազատութեամբ իրենց հիւպատոսներուն գատաստանին պիտի դիմեն:

(Օսմանեան տէրութեան մէջ՝ երկու դաշնադիր տէրութեանց հպատակներուն մէկմէկու հետ, կամ հելլենական հպատակներուն ուրիշ տէրութեանց հպատակներու հետ, կամ անոնց ասոնց հետ քաղաքական կամ առեւտրական պատճառներով վեճ կամ դատ ունեցած ժամանակներ, նոյնպէս Օսմանեանի մէջ՝ երկու դաշնադիր տէրութեանց հպատակներուն մէկմէկու հետ, կամ Օսմանեան հպատակներուն ուրիշ տէրութեանց հպատակներու հետ, կամ անոնց ասոնց հետ քաղաքական ու առեւտրական պատճառներով վեճ կամ դատ ունեցած ժամանակներ, երկու տէրութեանց մէջ ամենէն աւելի արտօնութիւն վայելող ազգաց նկատմամբ հաստատված կամ հաստատվելիք օրինաց եւ կանոնաց համեմատ ի գործ պիտի դրվին:

Նոյնպէս որոշված է, որ երկու դաշնադիր տէրութեանց մէկէն հպատակներուն միւսին հանդէս մէջ ըրած եղեւնութիւններուն եւ ուրիշ պատճենի գործերուն դատաստանը եւ պատիժը՝ երկու տէրութեանց մէջ ամենէն աւելի արտօնութիւն վայելող ազգաց նկատմամբ հաստատված կամ հաստատվելիք օրինաց եւ կանոնաց համեմատ ի գործ պիտի դրվին:

ՅՕԿ. ԻԵ: Երկու դաշնադիր տէրութեանց մէկէն առեւտրական նաւերուն մէկ կամ քանի մը նաւատարները՝ միւսին նաւահանգիստներուն մէջ՝ իրենց դրօշակին տակը կողք ուրիշ նաւու մը մարդոցը կամ իրենց ազգէն եղող ծանապարհորդներու դէմ յանցանք, եղեւնութիւն կամ ուրիշ պատճենի գործեր ըրած ժամանակներն, տեղական իշխանութիւնները զանոնք չպիտի դատեն ու պատժեն, այլ անոնց հարցուփորձն ու դատաստանը միայն իրենց հիւպատոսները կամ նոյն ազգին ուրիշ օրինաւոր իշխանութիւնները պիտի ընեն՝ երկու տէրութեանց իւրաքանչիւր ունեցած օրէնքներուն համեմատ:

Նոյնը պիտի ըլլայ նաեւ վերադիւրս անձանց մէջ պատահած ուրիշ ամեն տեսակ վեճերուն համար:

ՅՕԿ. ԻԶ: Թեւոր հելլենական հպատակ մը մեռնի վեհափառ Սուլթանին երկիրներուն մէջ, կամ օսմանեան հպատակ մը մեռնի Օսմանեանի մէջ, անոր վրայ իշխանութիւնն ունեցող հիւպատոսը՝ անոր թողուցած ընչոյն ու ստացուած ոգը տէր պիտի կենայ՝ ժառանգներուն ձեռքը հայցընելու համար: Թէ որ այն տեղը հիւպատոս չգտնվի, տեղւոյն դատաւորը պարտաւորեալ է՝ մեռելոյն ինչքը եւ անոնց հաշուեցուցակը մօտը գտնուած հիւպատոսին ձեռքը հայցընելու առանց որ եւ է տուրը մը պահանջելու:

ՅՕԿ. ԻԷ: Գաշնադիր տէրութիւնները կը խոտանան մէկմէկու, որ ուրիշ ազգի մը վաճառականներուն, բերքերուն կամ նաւարկութեանը արտօնութիւն մը տուած ատենին, նոյն արտօնութիւնը անմիջապէս մէկմէկու փաճուականներուն, բերքերուն ու նաւարկութեանն ալ տրված ըլլայ:

Սակայն այս ալ որոշված է, որ դաշնադիր տէրութիւններէն մէկը՝ թէ՛ ի մասնաւոր օգուտներ ձեռք բերելու պայմանով ուրիշ տէրութեան մը բերքերուն արտօնութիւն տուու ըլլայ, նոյն մասնաւոր օգուտները միւս դաշնադիր տէրութիւնէն ալ ուղիւն իրաւունք պիտի ունենայ:

ՅՕԿ. ԻԸ: Երկու դաշնադիր տէրութիւնները կը խոտանան մէկմէկու, որ իրենց տէրութեան նաւահանգիստները, ծովածոցները եւ երկաթ նետերու տեղերը ծովապատակ չենդուռնին, օրինաց ամեն խոտանութիւնը բանեցընեն ծովապատակներուն եւ իրենց հողը գտնուող ու ծովապատակներուն հետ յարաբերութիւն ունեցող անձանց դէմ: Երկու դաշնադիր տէրութեանց հպատակներուն նաւերը կամ նաւերուն ապրանքները որ ծովապատակներն առնեն կամ երկու տէրութեանց մէկէն նաւահանգիստները տանին, իրենց տեղերը կամ անոնց օրինաւոր երեւոյթներուն պիտի տրվին իրենց ըլլալը հաստատելէն ետքը, թէ եւ արդարեւ ծախված ալ ըլլայ:

Ներկայ դաշնագրութիւնը պիտի վաւերաւայ եւ վաւերական օրինակները պիտի փոխանակվին մինչեւ վեց շաբաթ, կամ աւելի առաջ թէ՛ ի կարելի է:

Ի հաստատութիւն այսօրիկ երկու տէրութեանց լրագոր գործակալները ստորագրեցին եւ իրենց կնիքը դրին:

Նշանակ ի Գաւրուճա, յեղը Ա ռափորի, ի 27 Մայիսի 1855 (24 Ռամազանի 1271):

Ստորագրեալ
ԳՈՒՍՏ. Ա. Կ. ԳՕՏՈՒՐԻՈՐԹԻ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
ԵՆՓՂԻԷ: Սըր Ուրիւր Սօլէս
Փորթ լորտ Ջոն Ռոյսը ի տեղը դադարեալ կանութեանց պաշտօնեայ ընտրվելով, իր վրայ եղած հասարակաց շինութեանց վերաւսնութեան պաշտօնը անողջադատ հոլութեան ժողովին նախագահ Գ. Պէն-ճափին հալին յանձնվեցաւ:
— Բամպրիճի դուքսին հրամանաւորութեանը ամառը գրված օտարազգի զօրաց գունդը 10 հազար հոգիէ կը բաղկանայ:

ԳՆՂՂԻԷ: Փարիզի եւ բոլոր դաւառներուն մէջ կառավարութեան ուղիւն 750 միլիոն ֆրանքի փոխը կ'առարարըրվի մեծ փութով: Փարիզի մէջ կը հաշուեն, որ այս ահագին գումարը մէկ շաբաթվան մէջ պիտի ստորագրվի Գաղղիոյ մէջ, եւ պետք չպիտի մնայ գաւառներէն եւ օտար երկիրներէ խրկված ըստակներուն:

Լրագիրները կը հաստատեն, թէ մինակ անդղիացեաց կողմէն տրված զրամաց գումարը 600 միլիոն անցեր է:

ԵՒՍՏՐԻԷ: Այս տէրութեան բռնած զիրքին եւ ըրած անօրէնութիւններուն նայելով, քանի մը գերմանական լրագիրներ լուր հաներ էին, թէ Գաղղիոյ ու Աւստրիոյ տէրութիւնները մէկմէկու հետ աւրվիք իրենց գեւապանները եւ կանչեր են: Բայց Աւստրիոյ կառավարութիւնն այս զրոյցները ստու կը հանէ կէս պաշտօնական յօդուած մը հրատարակելով Աւստրիոյ իշխանութիւնն ըսված լրագրին մէջ, ու յայտարարութիւն կ'ընէ, թէ Գաղղիոյ տէրութեան Ա իննայի գեւապան Գ. Պուրքնէ, եւ Աւստրիոյ տէրութեան Փարիզի գեւապան Գ. Հիւպնէր իրենց պաշտօնը չպիտի թողուն:

— Պուոլ կոմսը գերմանական դաշնակցութեան ժողովին ծանուցագիր մը խրկած էր, որուն մէջ Աւստրիոյ կառավարութեան մինչեւ հիմա բռնած եւ այստեղ հետեւ բռնելիք ընթացքը մանրամասնաբար բացատրելէն ետեւ, նոյն ընթացքին հետեւելու առաջարկութիւն կ'ընէր ժողովին: Բարուսիոյ կառավարութիւնը այս առաջարկութեան ընդունելուն դէմ էր եւ կ'աշխատէր որ չընդունվի: Ա իրջապէս դաշնակցութեան ժողովն այս օրերս իր միտքը յայտնեց: Նախ շնորհակալ կ'ըլլայ Աւստրիոյ կառավարութիւնէն, որ խաղաղութեան հաստատվելուն համար այնչափ ջանք ըրաւ: Երկրորդ անոր զիտաւորութիւնները իւր մասը համաձայն ըլլալը կը հաստատէ, բայց նոր պարտաւորութիւններ վրանառնելու չհաճիր: Ասանկով Աւստրիոյ ու Բարուսիոյ տէրութեանց անհամաձայնութիւնը չլրացաւ վերջալ, եւ վերջապէս ալ յոյս չկրնար ըլլալ՝ մինչեւ որ երկու տէրութեանց մէկը իր քաղաքականութեան ընթացքը չփոխէ:

— Բարուսիոյ Նեպոլէոն ըսված լրագիրը կը ծանուցանէ, թէ Աւստրիոյ զանաւոր պաշտօնեայ Գ. Պուրքնէ սեպտեմբեր ընկերութիւն մը կազմեր է, որուն նպատակն է ճիւղնափոխել Տուրինի անկէց Բիւսկէնի ջրանցք մը բանալ, եւ այն ջրանցքով Սեւ ծովու հետ հարաւորակցել Սուլինայի բերնէն չանցնելով: Այս ընկերութիւնը արդէն 10 միլիոն ֆիլիքի նոտարագրութիւն ժողովրդէն Բ. Գաւնէն հրաման խնդրեր է անմիջապէս գործի սկսելու համար: Սայ-

րադաքիւս Աւստրիական դեսպան Գ. Բուլքը սեպտեմբեր ալ հրաման եկեր է եղեր, որ ամեն ջանք ի գործ դնէ այս առաջարկութիւնը յաջողեցընելու համար:

ԲՐՈՒՍԻԷ: Պէն-ճափին լրագիրները մեծ գիտահոլութիւն կը ցուցընեն Աւստրիոյ ըրած յայտարարութիւններէն եւ արեւմտեան տէրութեանց հետ դաշնակցի մնալու զիտաւորութեան: Գաւառեական իշխանութիւնները գրաւելուն վրայ ալ խօսքեր կ'ընեն: Աւստրիա իրաւունք չունի կրնէն Գաւառեական իշխանութիւնները գրաւելու, եւ իր զօրքերուն հոն մը նայլը այսուհետեւ հարկաւոր չէ: Բնագրական փնտաստար ալ է կրնէն Տաճկաստանի եւ արեւմտեան տէրութեանց: Պէտք է որ կրնէն, պատերազմող դաշնակց տէրութիւններն իրենց զօրքերովը գրաւեն նոյն երկիրները, եւ Ռուսիոյ դէմ ուղղվի գործողութիւններուն խարխալ ընեն:

Այս խօսքերէն կը հասկցվի, որ Աւստրիոյ ու Բարուսիոյ տէրութեանց մէջ եղած անհամաձայնութիւնը թեւ թեւ բան չէ:

ԻՏԱԼԻԷ: Անուանի Սոմօնի խոսվարարին զրգոյի գրուածներովը եւ ամեն կողմ ունեցած լրտեսներուն զաղտնի ջանքերովը՝ Խաղիոյ ժողովրդաց մէջ խորին յուզմունք մը կայ կրնէն: Այս պատճառաւ որ Աւստրիոյ տէրութիւնը Լոմպարտիայի եւ մանաւանդ Հռոմի երկիրներուն մէջ ունեցած զօրքերը շատցընելու ետեւէ է, եւ արդէն խրկած զօրքերուն թիւը 50,000 կը հասցընեն: Նախօրի կառավարութիւնը այս օրերս կարգադրութիւն մը ըրեր է՝ կրնէն Աւստրիոյ հետ, որպէս զի Նախօրի պահպանութիւնը աւստրիական զօրաց յանձնվելով, յիշեալ քաղաքին պահպան զօրքերը Սիկիլիա երթան, ու հոն կ'ըլլիք ապստամբութեան առաջն առնեն:

Աւրիշ կողմանէ ալ ըսողներ կան, թէ Խաղիայի մանաւանդ Լոմպարտիայի մէջ այնպիսի մեծ ապստամբութիւն մը կ'ըլլու նշան չերեւիր այս օրերս, հետեւաբար Աւստրիոյ տէրութեան այն կողմերը նոր զօրաց բանակ մը խրկելու ուրիշ նպատակ մը ունենալու է կրնէն: Սարտենիայի տէրութիւնն ալ ասոր վրայ կ'աւանդէ մէջ է, եւ պատճառը պիտի հարցընէ կրնէն Աւստրիոյ կառավարութեան:

— Նախօրի նստող Անգղիոյ դեսպանը բողոք ընելով, Արեւելք խրկված ուսուցիչներուն վրայ գրված արգելքը վերցընել տալու կարող եղաւ:

— Բօլոնիոյ կը շարունակէ Լոմպարտիայի մէջ եւ Արեւիկան ծովուն եզերքը: Ամսոյ 9ին ու 10ին՝ 167 հոգի բռնվիւր են Թարիեստի մէջ եւ 60ը մեռեր են:

ՌՈՒՍԻԷ: Բեգրապուրէին հետեւեալ լուրերը կը գրեն զանազան լրագիրներու:

« Ռուսիոյ ծովեզերքներուն պաշտաւումը ահագին փնտսներ կը պատճառէ: Մոսկուայի արուեստից գործարաններուն մեծ մասը գրեթէ դադարեցաւ: Աղէքսանդր Ե. կայսեր օրէն՝ դաւառները բռնակող աշխատականներուն մէկմասը իրենց հարստութիւնը գործարաններ բանալու յատկացուցին, եւ իրենց սարուկները գործաւոր ըրին: Հիմա, այս գործա-

բանները՝ նախնական նիւթ, բամբակ, չղոված շաքար եւ այլն չղանկուն պատ- ճառաւ գոյցկցան, բայց տէրերը պար- տաւորված են իրենց ստրուկ գործաւոր- ները սնուցանելու: Այս պատճառաւ սիրով յանձն առին զանոնք տէրութեան կամաւոր զինուոր տալ: Ասկէ յայտնի կը հասկնային, որ այս ազնուականները պատերազմէն դո՛ւ չէին, ինչպէս որ դաւա- ռապետներուն տուած տեղեկագիրներէն ալ կ'ստուգվին: Ա' երջապէս Ռուսիոյ աղ- նուականները՝ իրենց տէրութեան յար- ձակող քաղաքականութեանը չին հաւ- նիր ամենեւին:

«Յաճախ կը լսենք. «Ծովային պա- շտարմը աստեկ տարի մըն ալ տեւէ նէ չենք կրնար դիմանալ:», Բեղարսուրի կազմէ գործարարը դադարեցաւ գետնա- ծովն չըլլալուն համար: Վանքիւմ ա- ծուխը կառավարութիւնը քաջեց առաւ զինուորական պիտոյից գործածելու հա- մար, եւ առատաձեւութեան երեւոյթ մը տալով ինքզինքին, հրաման քաւ որ ամեն մարդ կարող ըլլայ կայսեր ածու- խի հանքերը ձրիապէս փորելու եւ ա- ծուխ հանելու:

«Բայց պատերազմին երկնային ու- ըրիշ պիտոյքներ ալ երեւան ելան եւ կա- ռավարութիւնը մտածեցնել սկսան: Երկու տարին 'ի վեր շարունակ փառօղ շինելու պատճառաւ՝ տէրութեան մթե- րանցները դիզված անհատներ աղքա- րակը (կօհհրէշէ) սպառել սկսաւ: Պա- տերազմի տեսչութիւնը բոլոր Ռուսիոյ վաճառականներուն առաջարկութիւնը- ըրաւ, որ պահած աղքատի ունեցողները բերին տէրութեան տան՝ սովորական գը- նոյն եռապատիրը հատուցանել խոստա- նալով: Բոլոր վառօղարաններն ալ պա- րայ են: Արդէն քանի մը ամիսէ 'ի վեր՝ տէրութեան ներքին բերդերուն ու ամ- րութիւններուն մէջ պահված վառօղը պատերազմի պէտքերուն համար կը գոր- ծածվէ:»

—Անգղիոյ լրագրիւններուն մէջ հրա- տարակված զանազան թղթակցութիւն- ներու խօսքին նայելով՝ մեծ դաւակցու- թիւն մը, ոմանք ալ կ'ըսեն յերափոխու- թիւն մը ծագելու Ռուսիոյ մէջ: Ղրթ- բաղդաբար՝ Ռուսիոյ սահմաններէն դուրս լուր ելելը խիստ դժուար ըլլալով, այս ապստամբութեան վրայ մանրամասն եւ ճիշդ տեղեկութիւններ չկան: Բայց, ժամանակէ մը 'ի վեր Ռուսիոյ մէջ պատ- ժրված բարձրատիրման զինուորականնե- րուն շատութեանը նայելով, մեծ դա-ւադրութիւն մը կամ յերափոխութեան զիտաւորութիւն մը գտնուված ըլլալը կը կասկածվէր:

—Բեղարսուրիէն յուլիս 13 թը-ւով Համպուրիէ 'Եւ-էն-է' լրագրին հե- տեւեալը կը գրեն:

«Գրքում մէջ գտնուված հիւանդնե- րուն ու վերաւորներուն թիւը ստուգիւ- կարգէ դուրս կ'երեւի: Ներքուցվել, Սիմֆերոփոլ ու Սէվասթոփոլ մէջ ոչ տեղ կայ զանոնք պատասպարելու եւ ոչ բժիշկ կայ դարմանող: Խեղճերը մէկ տե- ղէն մէկալը կը տարվին, եւ շատ անգամ օրերով կը մնան առանց պատասպարան զանելու:»

—Օտեսայէն յուլիս 6/18 թուով հետեւեալը կը գրեն:

«Ռուսերն աս կողմերէն յարձա- կում կ'ընեն փախ ունենալով, Ռոսթովը ամրացնելու կ'գլխաւնեն: Տօն գետին բե- րանը մեծամեծ ապառաժներ ձգելով խափանեցին, որպէս զի նաւ չկրնայ անց-

նիլ: Տօն քաղաքն ալ խաղախներով լցված է: Այսու ամենայնիւ բնակիչները կը փախան հոն կենալու եւ երկրին նե- սերը կը քաշվին: «Ներքուցվել բանակն ալ օրէ օր մեծնալու վրայ է: Վաղող զօրքերուն տեղը մեծ մասամբ ուրիշներ կուգան: Երջապէսն ալ բազմաթիւ զօրաց դունդեր դումարված են Պակովա զօրա- պետին հրամանին տակ: Վոլգան միշտ կը շարունակէ. այս օրերս Վիշնիվ մէջ ալ երեւան ելաւ:»

—Բեղարսուրիէն գրված նամա- կները կը ծանուցանեն, թէ քոլէսան հոն ալ երեւան ելելով, պատիկ կոտորած կ'ը- նէ: Հուլիս 8ին հրատարակված պաշ- տոնական ցուցակին նայելով, նոյն օրը 221 հողի բռնկվել են քոլէսայէն:

—Պէճիկայի Լաւրէնտիւս լրագրին խօսքին նայելով, Լեհաստանի ժողո- վըրդոց խոստացված արտոնութիւնները գործի դրվելու վրայ են: Վաղաքական յանցանքներու քննութեանը համար կա- ռավարութեան կողմէն հաստատված յանձնարարական ժողովը լուծվել է, եւ այս գործերը հասարակ տեսանքները պի- տի դատեն: Պաշտոնական գործերու մէջ Լեհաց լեզուն պիտի գործածվէ՝ ինչ- պէս 1831 էն առաջ: Պայսեր հրովար- տալիսն անգամ Լեհաց լեզուով պիտի հրատարակվին Լեհաստանի մէջ: Բարձ- րագոյն կարգի գործակալութիւնները պաշտոնատուններու պիտի փոխվին եւ անոնց ղեկը կեցող անձինքը պաշտոն- եայ պիտի կոչվին:

Ռուսիոյ տէրութիւնը՝ այս արտո- նութիւնները Լեհիւն շնորհելով՝ կը յուսայ անոնց սիրտը վատրելը, որպէս զի դաշակից տէրութեանց հետ բրած ծանր պատերազմին ժամանակը՝ Լեհաս- տանի կողմէն ալ ապստամբութեան հրը- դէհ մը չգործէր: Բայց ամեն մարդ դի- տէ, եւ մասնաւորապէս Լեհերը, թէ Ռու- սիոյ տէրութեան խոստացած շնորհնե- րուն եւ արտոնութիւններուն փաստ- լը որչափ մեծ անմտութիւն է:

—Բեղարսուրի լրագրը յուլիս 6/18ին օրը եղած Մալաբոթի պատե- րազմին վրայ Սորաբոթի իշխանին տուած տեղեկագիրը կը հրատարակէ: Այս տե- ղեկագրին մէջ՝ Սորաբոթի իշխանը նոյն օրը եւ առջեւ օրը ռուսաց կողմէն եղած կորուստը 783 մեռած եւ 4979 վերա-ւոր կը հաշուէ, որոնց մէջ 3 ալ զօրա- պետ կան:

Այս թիւերուն կրկնապատկը հաշ- ուելու ըլլանք նէ, կարելի է ճիշդ գումա- րին կը մօտենանք:

—Լեհաստանի մէջ պատրաստ գըտ- նուված զօրքերէն 72 հազար հողի՝ 8000 ձիաւորով եւ բաւական թնդանութով՝ Գրքում երթալու սահմանված են կ'ըսեն: Այս զօրքերը Ռուսիոյ բանակին ամե- նէն բնոր մասն են: Ուշաքոճ զօրապե- տին բաժինը արդէն Բէլէքոթ եկել է, որով Գրքում ռուսաց հետեւակ զօրքե- րուն թիւը 40 դունդի հասել է՝ առանց ձիաւորները, թնդանութիւնները եւ ու- ըրիշ տեսակ զօրքերը հաշուելու:

ԱԶԳԱՅԻՆ

Ազգային Հոգեւոր եւ Վերագոյն ժողովոց որոշմամբն եւ ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր հաճութեամբ ըր՝ Տիգրանակերտի նախկին առաջնորդ գերապատիւ Յակոբ եպիսկոպոսը Անայ

վիճակին հոգեւոր հովիւ եւ տեսուչ կարգեցաւ:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Պ. Պօլոյ կայսերական բանակին հինգերորդ դունդը (ալայ) որ Բուժիչի էր, անցեալ չորեքշաբթի եւ հինգշաբթի օրերը Վանայէն մայրաքաղաքս հա- սաւ եւ անմիջապէս Սպարապետի 'Բու- ուր զնաց:

—Մոլտախայի իշխանութեան հա- սարակաց շինուածոց պաշտօնեայ Պ. Նէկրի եւ հասարակաց կրթութեան պաշտօնեայ Պ. Ռալէթի կիրակի օրը մայրաքաղաքս հասան Բ. Բրան վերա- բերեալ պաշտօնով մը:

—Վաղղոյ լրագրիւնները լուր կու- տան, թէ Եփրիկի Տրիպոլոյ մէջ ապստամբութիւն ծագեր, դաւառին կուսակալը Վաղղոյ կառավարութեան շուտով օղնութիւն ուղեր է:

—Անգլիանուպօլիսէն եկած նա- մակները լուր կուտան, թէ քոլէսան մէկ երկու օրի չափ զերեք վախճանէն ետեւ, բարեբաղդաբար դադրեք՝ ու հիմա բոլո- րովն անհետ եղեր է:

—Չանագ-Վալէէն յուլիս 21 թը-ւով մայրաքաղաքիս Դաւանալի գրված նամակ մը լուր կուտայ, թէ մայրաքաղա- քէս խրկված զօրքերը՝ քաղաքին մէջ Պաշտ-Պօլուգներուն բրած անկարգու- թիւնները մեծ մասամբ դադարեցուցեր են, բայց քաղաքէն դուրս՝ դեռ բրածնին կ'ընեն եղեր: Անգղիացոց 'Նէյլ զօրա- պետը եւ Հալպի անգղիացոց հիւպա- տոսը Պերութէն Չանագ-Վալէ հասեր են 320 արաբացի ձիաւորներով, եւ Պա- շտ-Պօլուգները զսպելու միջոցներ ձեռք առնելու ետեւէ են:

—Վաղղիական Տեղ- լրագրին մէջ հետեւեալ լուրը կը կարդանք:

Վենետիկցի Դեյում Լափիսանուն մէկը՝ հնարք մը դտեր է, որ բրինձի ար- տերը մէկ անգամ ցանելով երկու անգամ բերք տան: Անցեալ տարի ասոր փորձն եղաւ Ալեքսանդրիա եւ կատարեալպէս յաջողեց: Բարձրապատիւ Սայիտ փա- շան՝ վերջին աստիճան գոհ ըլլալով, Պ. Լափիսը կանչեց ու եօթը տարուան արտոնագիր մը տուաւ որ իր այս օգտա- կար դիւտը 'ի գործ զնէ իր բրինձի ար- տերուն մէջ: Նորին բարձրութեան օրի- նակին նայելով, բազմաթիւ բնիկ եւ եւ- րոպացի հողատէրներ այս նոր կերպը ըն- դունեցին եւ իրենց բրինձի արտերուն վրայ 'ի գործ դրին: Արդէն այս նոր եւ դանակաւ բուսած բրինձը հասի կապած հատուցած է, որն որ տեսնուված բան չէր այս երկրին մէջ, եւ առաջին հունե- թը յուլիսի մէջերը պիտի ըլլայ, ուր առ- ջե եղանակաւ ցանված բրինձը սովորա- բար հովտներէր վերջերը կը հասնէր:

—Անցեալ հինգշաբթի իրիկուն- ժամը երկուքուկէսին միջոցները՝ Պէյօղ- լու Աղա Ջամին շետակ ծամբուն վրայ Խալալցի մը ուրիշ քանի մը մարդոց հետ կռիւ ընելով՝ ասորձանակ պարպեց անոնց վրայ: Մօտի պահապան զինուորները հրազենին ձայնը լսելով՝ վաղեցին որ այս մարդը բռնեն, բայց յանդուգն չարա- զործը անոնց վրայ ալ կրակ ընելով զն- ուորներուն մէկը զլինէ եւ միւսը ուսէն ծանրապէս վերաւորեց, ու սկսաւ փախ- չել դէպ 'ի Ենի Ենի, սակայն չըն- ցաւ աղատիլ: Պահապան զօրքերը եւ ուրիշ բազմաթիւ անձինք ետեւէն ինա- լով՝ բռնեցին տեսչութեան դուռը տա-

րին, ուր բանտը գրվեցաւ: —Անգլիացիները օրն ալ ցերեկը ժամը երեքուկէսին միջոցները Վալա- թիա Բէրլէմիէ-Պաղարի փողոցը՝ չորս խալալցի նաւաստի՝ ուրիշ խալալցի նա-ւաստի մը դանակով չորս տեղէն զարկին ու փախան: Վերաւորեալ անմիջապէս մօտը գտնուված աւստրիական հիւանդա- նոցը տարվեցաւ, ուր քանի մը վայրկեան ետքը հողին փչեց:

—Անգղիոյ լրագրիւնները ծանր եղեւ- նագործութիւն մը կը պատմեն, որ այս օրերս կատարվել է Էփեսոսի ծոցին մէջ: Պալէ մը՝ որ առջեւ բերանը դադը- ալցի կարծեր են՝ տեսնուվել է այս ծոցին մէջ. ետքը դէպ 'ի Բուժիչի ծոցի գերքը գացել՝ երկաթ նետեր է: Ասին կեր- պարանքը կասկած պատճառելով, հե- լենական իշխանութիւնները մակդի մը խրկեր են վրան: Բայց մակդի ծոցի գեր- քէն մեկնելուն պէս՝ պալէքը խոյն եր- կաթ վերուցեր փախել է եւ ուր երթալը չէ գիտցուվել: Ատքը փնտրուելով լուր առ- նըվել է, որ այն պալէքը Օսմանցի է եւ Մարսիլայէն ապրանք առած Պ. Պօ- լիս կը դառնայ եղեր: Սաւաստիներուն մէկ մասը յոյն՝ մէկ մասը օսմանցի ըլլա- լով, ծամբան՝ յոյներն զտաճիկները ըս- պաններ, նաւը բռնկուցներ եւ մէջի ապ- բանքներուն մեծ մասը Օսմանեան սահ- մանը հաներ են: Մնացածն ալ ծովուն երեսը կը ծփան եղեր: Վաղղիական Օ- լիս շոգնաւը նոր խուզարկութիւններ ընելու եւ ծովասպատակներն հալածե- լու խրկուվել է:

—Վաղղիական Բէլ լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք:

Վաղղոյ չըջակայ ծովերուն մէջ զանրված բաղմատեսակ վառագաւոր կեն- դանիներուն կամ ծովային գաղաններուն մէջ մէկ հատ մը կայ, որ թէպէտ թոյլ եւ կախուղ մարմին ունեցողներուն տե- սակէն է, այսու ամենայնիւ ծով մանու- ղին կամ լողացողին համար վերջին աս- տիճան վտանգաւոր է, որովհետեւ բոլ- նածին պէս ծովուն տակը կը քաշէ կը տանի: Այս հրէշին գաղղիացիները ծո- վու մամուկ կ'ըսեն:

Մարմինը կտր դունտ մըն է՝ երկու խոշոր աչքերով: Վունտին վրայ ութը հատ թեւեր կան՝ որոնց ծայրը զօրաւոր ծծելու գործիքներ են: Անդամին այս ծծող թեւերուն զօրութեամբ իր որ- սը կը բռնէ, եւ թէոր այն որսը քիչ մը եւեթիկ իրեն դէմ գնելու կարող ըլլայ, այնպիսի սատիկ եղբարական ցնցում մը կուտայ անոր, որ բոլոր ուժը կը կտրի: Այս վնասողական զենքերէն զատ՝ ծովի մամուկը զարմանալի պաշտպանողական զենք մ'ալ ունի: Երբոր իրմէն զօրաւոր թշնամի մը իր ետեւէն ինչոյ, կը փախչի, եւ ապահովութեամբ ազատելու ու պահ- վետելու համար՝ տեւ ու կաշուն հիշուկ մը իր չորս կողմը կը տարածէ, որ վնաս- գամայն կը միջոցնէ ու կ'ապականէ ջուրը, այն կերպով՝ որ սեւ ամպի մը մէջ ինքը աներեւոյթ կ'ըլլայ:

—Պ. Պ. ինք հէլ՝ Վան անունով գերմանացի հարուստ կալուածատէր մը՝ բժիշկներուն խորհրդովը երկու տարի է 'ի վեր Վաղղիա եկած՝ Միջերկրական ծովուն եղերքը կը բնակի իր կնոջ ու որդւովը: Որդին՝ տասնեւութը տա- րեկան պատանի մը՝ ամառ իրիկուները սովորութիւն ունի ծովը մանելու իրենց տանը մօտը եղած ապառաժներուն ստո- թորը: Այս օրերս իրիկուն մըն ալ ըստ սովորութեան ծովը կը մտնէ, բայց չեւ-

